ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

Գործ թիվ ՎԴ/0015/05/14

« 14» մարտի 2014թ. ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔԸ ՄԱՍՆԱԿԻ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան), (դատավոր Ա.Առաքելյան), քննելով ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲ ընկերության տնօրեն Վազգեն Հարությունյանի, «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲ ընկերության՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը ճանաչելու, պահանջվող տեղեկատվության տրամադրումը «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲ ընկերության տնօրեն Վազգեն Հարությունյանի կողմից մերժելու համար վերջինիս՝ 50.000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու և պատասխանողին հայցվող տեղեկատվությունը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին, թիվ ՎԴ/0015/05/14 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 16.01.2014 թվականի որոշման դեմ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Կարեն Մեժլումյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲ ընկերության տնօրեն Վազգեն Հարությունյանի, «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲ ընկերության՝ խնդրելով ճանաչել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը, պահանջվող տեղեկատվության տրամադրումը «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲ ընկերության տնօրեն Վազգեն Հարությունյանի կողմից մերժելու համար վերջինիս ենթարկել վարչական պատասխանատվության՝ 50.000 դրամի չափով և պարտավորեցնել պատասխանողին տրամադրել հայցվող տեղեկատվությունը:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի /դատավոր՝ Ա.Ծատուրյան/ 2014 թվականի հունվարի 16-ի որոշմամբ հայցադիմումը մասով վերադարձվել է, մյուս մասով հայցադիմումի ընդունումը մերժվել է:

Չհամաձայնվելով նշված որոշմանը՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Կարեն Մեժլումյանը 2014թ. փետրվարի 10-ի փոստային առաքմամբ ներկայացրել է վերաքննիչ բողոք:

Թիվ ՎԴ/0015/05/14 վարչական գործը Վերաքննիչ դատարան է մուտքագրվել 17.02.2014թ. և 18.02.2014թ. հանձնվել է դատավոր Ա.Առաքելյանին:

Վերաքննիչ դատարանի /դատավոր՝ Ա.Առաքելյան/ 21.02.2014 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ:

Վերաքննիչ դատարանին է ներկայացվել «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲ ընկերության տնօրեն Վազգեն Հարությունյանի վերաքննիչ բողոքի պատասխանը:

2. Բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

1. Գործի դատավարական նախապատմությունը

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն (այսուհետ՝ Հայցվոր) հայցով դիմել է ընդդեմ «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ տնօրեն՝ Վազգեն Հարությունյանի և «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի՝ խնդրելով ճանաչել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը: Պահանջվող տեղեկատվության տրամադրումը «Փարքինգ Սիթի Սերվիս»

ՓԲԸ տնօրեն՝ Վազգեն Հարությունյանի կողմից մերժելու համար վերջիններիս ենթարկել վարչական պատասխանատվության՝ 50.000 դրամի չափով: Պարտավորեցնել պատասխանողին տրամադրել հայցվող տեղեկատվությունը:

Վարչական դատարանի բողոքարկվող որոշմամբ հայցադիմումը «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲ ընկերության տնօրեն Վազգեն Հարությունյանին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով վերադարձվել է, իսկ իրավունքի խախտման փաստը ճանաչելու և հայցվող տեղեկատվությունը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասով հայցադիմումի ընդունումը մերժվել է:

2. Պատճառաբանական մաս

1. Իրավունքի խախտման փաստը ճանաչելու մասին հայցապահանջի ընդունումը մերժելով դատարանը պատճառաբանել է, որ այդ պահանջը ներկայացվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով՝ ճանաչման հայցով, որպիսի պահանջ կարող է ներկայացվել, եթե հայցվորը զրկված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-68-րդ հոդվածներով սահմանված կարգով հայց ներկայացնելու հնարավորությունից:

Գտնում է, որ օրենքի նման մեկնաբանությամբ խախտվում է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված՝ հայցվորի խախտված իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը:

Դատարանի նման դիրքորոշումը հակասում է նաև թիվ ՎԴ/0480/05/10 գործով վարչական դատարանի 22.06.2011թ. վճռով արտահայտած իրավական դիրքորոշմանը:

Այսպես, նշված գործով դատարանը վճռել է. «Լևոն Բարսեղյանի հայցը բավարարել՝ ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահ Գագիկ Խաչատրյանի կողմից հայցվորի տեղեկատվության ազատության իրավունքի խախտման փաստը:

Պարտավորեցնել...»:

Վճռի՝ իրենց հետաքրքրող մասի վերաբերյալ դատարանի պատճառաբանությունը հետևյալն է. «Տեղեկատվություն ստանալու մասին գրավոր հարցում ներկայացնելով՝ հայցվորը կարող էր և իրավունք ուներ ակնկալելու, որ իրավական պետություն հանդիսացող Հայաստանի Հանրապետությունում, որտեղ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված է տեղեկատվություն ստանալու անձի իրավունքը, ոչ ուշ, քան նախատեսված է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով, ինքը կստանա իր հարցումների սպառիչ պատասխանները: Մինչդեռ, ինչպես հաստատվեց դատաքննությամբ, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված ժամկետում և կարգով որևէ պատասխան չի ներկայացրել Լևոն Բարսեղյանին:

... Այսպիսով, դատարանը հաստատված և անհերքելի է համարում հայցվորի տեղեկատվության ազատության իրավունքի խախտման փաստի առկայությունը, հետևաբար նշված փաստը ճանաչելու հայցվորի պահանջը հիմնավոր է և ենթակա է բավարարման»:

Սույն գործով հայցադիմումի ընդունումը մերժելով դատարանը նաև պատճառաբանել է, որ «... իրավունքի խախտման փաստի ճանաչումը ներառված է և տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու, և վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջների մեջ, քանի որ նշված երկու պահանջների քննության շրջանակներում պարզման ենթակա հանգամանք է հանդիսանում այն հարցը, թե տեղեկատվությունը տնօրինողը խախտել է արդյոք անձի՝ տեղեկատվություն ստանալու իրավունքը»:

Նշված մեկնաբանությամբ ևս չի վերանում դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի խախտումը, քանի որ եթե պատասխանողը, հատկապես վարչական մարմինը մինչև վճիռ կայացնելը կատարում է հայցադիմումում նշված պահանջը, ինչի արդյունքում դատարանը կարճում է գործի վարույթը և չի անդրադառնում հայցվորի իրավունքի խախտման փաստին, հայցվորը չի կարող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 15-րդ գլխի պահանջին համաձայն վարչարարությամբ իրեն պատճառված վնասի հատուցման պահանջ ներկայացնել կամ նման պահանջ ներկայացնելու համար առնվազն պետք է իրավունքի խախտման փաստը ճանաչելու հայցապահանջ ներկայացնել դատարան և այդ գործի ավարտից հետո միայն դիմի վնասի հատուցման պահանջով, այսինքն առնվազն երեք տարբեր դատական գործեր պետք է քննության առնվեն, մինչև որ լուծում տրվի վնասի հատուցման վերաբերյալ պահանջին: Այսպիսով, ակնհայտ է, որ վարչական գործերով նման մեկնաբանությամբ կխախտվի ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, որը ներառում է նաև ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունքը:

Տեղեկատվություն տրամադրելու պահանջի մասով դատարանը հայցադիմումի ընդունումը մերժել է՝ պատճառաբանելով, որ. ««Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲ ընկերությունը չի հանդիսանում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, ուստի այդ ընկերությանը կամ նրա տնօրենին տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջը ենթակա չէ վարչական դատարանում քննության»:

Նախ նշում է, որ վերը նշված պահանջը հաջորդում է վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջին, այսինքն հետևանք է, ուստի նման պատճառաբանությամբ հայցադիմումի ընդունումը մերժելով ևս դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոցի հայցվորի իրավունքը, որը ներառում է նաև ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունքը:

Բանը նրանում է, որ հակառակ դեպքում հայցվորը ստիպված կլինի տարբեր դատարաններում մի քանի դատական գործեր նախաձեռնել, մի կողմից պահանջվող տեղեկատվությունը ստանալու համար, մյուս կողմից տեղեկատվությունը չտրամադրած պաշտոնատար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար, երրորդ դեպքում՝ վնասի հատուցման պահանջի համար:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40 հոդվածի համաձայն, «Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ»:

Ակնհայտ է, որ եթե նման պահանջ կա, ապա դատարանը պարզելով այն փաստը, որ հայցադիմումում նշված անձը կատարել է վարչական իրավախախտում, ոչ միայն նրան պետք է ենթարկի վարչական պատասխանատվության, այլ նաև նրան պարտավորեցնի կատարելու այն պարտականությունը, որը չկատարելու համար ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Դա բխում է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածից, որը վերաբերում է հետևանքների վերացման ածանցյալ պահանջին:

Եթե անգամ տեղեկատվություն տրամադրելու պահանջը վարչական դատարանին ընդդատյա չէ, ապա ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 81 հոդվածի համաձայն հայցադիմումը պետք է վերահասցեագրվեր այն դատարանին, որին ընդդատյա է գործը, ինչը չանելով էլ բողոքարկվող որոշմամբ խախտվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածի պահանջը:

Դատարանը իրավունքի խախտման փաստը ճանաչելու և տեղեկատվություն տրամադրելու մասին հայցապահանջների ընդունումը մերժելու պայմաններում, մնացած միակ՝ վարչական պատասխանատվության վերաբերյալ հայցապահանջը վերադարձրել է՝ ի խախտումն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջի, որի համաձայն, «Վարչական դատարանը հայցադիմումը վերադարձնում է պատշաճ հիմնավորմամբ՝ նշելով բոլոր առերևույթ սխալները», չնշելով որևէ սխալ:

Դատարանը հող է կատարել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին, սակայն այդ հիմքն էլ առկա չէ, քանի որ ինչպես վերը նշվեց, նախորդ երկու պահանջների մասով հայցադիմումի ընդունումը մերժվել է:

Գտնում է, որ վերը նշված խախտումները հիմք են բողոքարկվող որոշումը վերացնելու համար, ուստի ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ և 80-րդ հոդվածների, 22-րդ գլխի կանոններով՝ խնդրում է վերացնել ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/0015/05/14 գործով 16.01.2014թ. որոշումը:

<u>2.1 «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲ ընկերության տնօրեն Վազգեն Հարությունյանի դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ վարչական դատարանը, նախագահությամբ դատավոր Ա.Ծատուրյանի (հետայսու՝ Դատարան) քննել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հայցն (հետայսու՝ Հայցվոր) ընդդեմ «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲ ընկերության (հետայսու՝ Պատասխանող)՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը ճանաչելու, պահանջվող տեղեկատվության տրամադրումը «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲ ընկերության տնօրեն Վազգեն Հարությունյանի կողմից մերժելու համար վերջինիս վարչական պատասխանատվության ենթարկելու՝ 50.000 ՀՀ դրամի չափով, և վճարովի ավտոկայանատեղերում տեղադրված յուրաքանչյուր տեսախցիկի տեղադրման համար հիմք հանդիսացած իրավական ակտի (օրենք, որոշում, կարգադրություն և այլն) պատճենը տրամադրելու հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը և որոշել է հայցադիմումի ընդունումը մասով վերադարձնել և հայցադիմումի ընդունումը մասով մերժել:

Պատասխանողն ամբողջությամբ առարկում է Հայցվորի կողմից ներկայացրած վերաքննիչ բողոքը՝ գտնում է, որ այն անհիմն է, չի բխում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի պահանջներից ստորև նշված պատճառաբանությամբ.

Պատասխանողը չի ընդունում բողոքի հիմքում ընկած հետևյալ փաստերը.

1. Պատասխանողը չի ընդունում Հայցվորի կողմից վկայակոչած այն փաստը, որ Դատարանի որոշմամբ խախտվել է Հայցվորի ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված՝ Հայցվորի խախտված իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը:

2.Պատասխանողը չի ընդունում նաև այն, որ Դատարանի դիրքորոշումը հակասում է թիվ ՎԴ/0480/05/10 գործով վարչական դատարանի 22.06.2011թ. վճռով արտահայտված իրավական դիրքորոշմանը.

Պատասխանի հիմքում ընկած հիմնավորումները.

Հարկ է համարում նախ նշել այն, որ Հայցվորի կողմից ներկայացրած Հայցադիմումի առարկան (պահանջը) ոչ իրավաչափ է և չի կարող վերաբերել Պատասխանողին:

Նշվածը պատճառաբանվում է հետևյալով.

Հայցվորը դատարանից պահանջել է միաժամանակ երեք պահանջ՝ ճանաչման, վարչական պատասխանատվության ենթարկելու և գործողություն ների կատարման:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչելու որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը. եթե նա չի կարող հայց ներկայացնել սույն օրենսգրքի 66-68-րդ հոդվածների համապատասխան»:

Հայցվորը ճանաչման հայցով դատարանից պահանջել է ճանաչել Հայցվորի իրավունքների խախտման փաստը: Պատասխանանում նշվում է, որ իրավունքի խախտման փաստը դեռևս իրավահարաբերության առկայություն կամ բացակայություն չէ, և ճանաչման հայցով վարչական դատարան կարող են դիմել միայն վարչական մարմնի դեմ: Ընդ որում ճանաչման հայց կարող է ներկայացվել միայն, եթե հայցվորը չի կարող ներկայացնել՝ վիճարկման, պարտավորեցման և գործողության կատարման հայցեր: Այն ինչ, հայցվորն անտեսելով վերը նշված հոդվածի պահանջն իրարամերժ հայց է ներկայացրել:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ «Գործողության կատարման հայցով հայցվորը կարող է պահանջել կատարելու որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալու այնպիսի գործողություններից, որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը: Գործողության կատարման հայցով հայցվորը կարող է պահանջել նաև օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու հետևանքով վարչական ակտն ընդունված համարվելու դեպքում տրամադրել օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը»:

Համաձայն այդ հոդվածի՝ Հայցվորը պահանջել է՝ պարտավորեցնել Պատասխանողին տրամադրելու տեղեկատվությունը: Ինչը, կարծում է, անհիմն է, քանի որ գործողության կատարման հայցով կարող են դիմել միայն վարչական մարմնի դեմ, այլ ոչ թե իրավաբանական անձի դեմ, քանի որ գործողության կատարման հայցը վերաբերում է միայն վարչական ակտ ընդունելուն կամ չընդունելուն: Ավելին՝ Պատասխանողը վարչական մարմին չէ և վարչական ակտ ընդունելու կամ վարչական ակտի ընդունումը մերժելու որոշում չի կարող կայացնել:

ՀՀ վարչականդատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի համաձայն՝«Սույն օրենսգիրքը սահմանումէՀայաստանիՀանրապետությանվարչականդատարանում(այսուհետ՝վարչականդատարան)... պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական և նորմատիվ ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանականան անձանց դեմ վարչական մարմինների և պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության կարգը»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «վարչական մարմիններ՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններ՝

ա) Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմիններ՝ Հայաստանի Հանրապետության նախարարություններ և Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմիններ.

բ) տարածքային կառավարման մարմիններ՝ մարզպետներ.

գ) տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ավագանի և համայնքի ղեկավար, քաղաքապետ՝ քաղաքային համայնքում, գյուղապետ՝ գյուղական համայնքում..»:

Հարկէհամարումանդրադառնալնաև Հայցվորիկողմից կայակոչածայնփաստին,որ Դատարանիդիրքորոշումը հակասումէթիվ ՎԴ/0480/05/10 գործով վարչական դատարանի 22.06.2011թ. վճռով արտահայտված իրավական դիրքորոշմանը: Հակիրճ նշումէ, որ վերը նշված գործով որպես պատասխանող ներգրավվել է վարչական մարմին, որ ի համաձայն էսույն գործի վերը նշված գործի հանգամանքները տարբեր են և դատարանը կարող էր հակառակ դիրքորոշում հայտնել:

Ելնելով վերոգրյալից՝ կարծում է ՀՀ վարչական դատարանը իրավասու չէ քննելու իրավաբանական անձանց՝ մասնավորապես գործողության կատարման հայցերով, մինչև առաջացած վեճերը, քանի որ

ինչպես նշվել է վերևում, Պատասխանողը վարչական մարմին չէ և Հայցվորի կողմից ներկայացրած հայցը հանրային իրավունքի բնագավառի վեճ է:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի պահանջը՝ խնդրում է վերաքննիչ բողոքը մերժել ամբողջությամբ:

3.Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Ուսումնասիրելով բողոքը՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ այն ենթակա է բավարարման մասնակի, հետևյալ հիմնավորմամբ:

Հայցվոր կողմը սույն գործով ներկայացրել է հետևյալ պահանջները՝ հետևյալ հերթականությամբ.

1. Ճանաչել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը:

2. Պահանջվող տեղեկատվության տրամադրումը «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ տնօրեն՝ Վազգեն Հարությունյանի կողմից մերժելու համար վերջինիս ենթարկել վարչական պատասխանատվության 50.000 դրամի չափով:

3. Պարտավորեցնել պատասխանողին տրամադրել հայցվող տեղեկությունը:

Ընդ որում, հայցադիմումում առկա չէ որևէ նշում այդ պահանջներից որևէ մեկը, որպես հետևանքների վերացման ածանցյալ պահանջ ներկայացրած լինելու վերաբերյալ: Բացի այդ, հայցադիմումի ներածական մասում նշված է «26.12.2013թ.» թվագրումը, ինչը հիմք է տալիս կարծելու, որ հայցադիմումը կազմվել է և իրավական հիմքերը նշվել են մինչև 07.01.2014թ. գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի դրույթների հիմքով: Այս առումով, որպես պահանջի իրավական հիմք մասնավորապես նշվել է վերը նշված օրենսգրքի 68 և 71-րդ հոդվածները, որոնք չեն վերաբերում հետևանքների վերացման ածանցյալ պահանջին:

Վերաքննիչ բողոքում կողմը նշում է, որ հայցվող տեղեկատվությունը տրամադրելու պարտավորեցման պահանջը վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի հետևանք է՝ որպես իրավական հիմնավորում մատնանշելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40 և ներկա պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի համաձայն՝ **<u>վիճարկման, պարտավորեցման, գործողության կատարման կամ ճանաչման հայցի հետ</u>** կարող է ներկայացվել պահանջ այն հետևանքները վերացնելու մասին, որոնք առաջացել են վիճարկվող վարչական ակտի կամ վիճարկվող գործողության (անգործության) կամ վարչական ակտ ընդունելը մերժելու կամ վարչական ակտ չընդունելու հետևանքով:

Նշվածի կապակցությամբ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ներկա պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածը նախատեսում է, որ հետևանքների վերացման ածանցյալ պահանջ կարող է ներկայացվել միայն վիճարկման, պարտավորեցման, գործողության կատարման կամ ճանաչման հայցի հետ, որպիսի հայցապահանջ՝ վարչական պատասխանատվության ենթարկելու հայցապահանջը, չի հանդիսանում: Այն իրենից ներկայացնում է՝ մինչև 07.01.2014թ. գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխով նախատեսված **<u>հատուկ վարույթի</u>** կարգով քննվող պահանջ, որպիսի վարույթը՝ հետևանքների վերացման ածանցյալ պահանջի ներկայացման դրույթ, չի պարունակում:

Ինչ վերաբերում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածին, ապա այն՝ պահանջների ընդունելության ժամանակ, որպես դատավարական նորմ դիտարկվել չի կարող, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատավարության կարգը սահմանվում է սույն օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով:

Ամբողջ վերոշարադրյալի հիմքով Վերաքննիչ դատարանը գտնում է, որ հայցվորի ներկայացրած երեք պահանջները իրենցից ներկայացնում են **<u>ինքնուրույն</u>** պահանջներ և դրանց ընդունելության հարցը պետք է լուծվի յուրաքանչյուրի վերաբերյալ առանձին:

Իրավունքի խախտման փաստը ճանաչելու պահանջի կապակցությամբ Վերաքննիչ դատարանը փաստում է հետևյալը:

ՀՀ վարչական դատարանի վիճարկվող՝ 16.01.2014թ. որոշման ժամանակ գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչել որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, եթե նա չի կարող հայց ներկայացնել սույն օրենսգրքի 66-68-րդ հոդվածներին համապատասխան:

Այսինքն, ճանաչման հայց ներկայացնելու համար օրենսդրի կողմից, որպես նախապայման սահմանվել է՝ ՀՀ վարչական դատավարության 66-68-րդ հոդվածներին համապատասխան վիճարկման, պարտավորեցման և գործողության կատարման հայց ներկայացնելու անհնարինությունը:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Դատարանի որոշումը հիմնավոր է, քանի որ բողոքաբեր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունն զրկված չի եղել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-68-րդ հոդվածների /մինչև 07.01.2014թ. գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-67-րդ հոդվածների/ հիմքով հայց ներկայացնելու հնարավորությունից: Առավել ևս, որ սույն հայցադիմումով արդեն իսկ ներկայացվել է գործողության կատարման հայց, այն է՝ պարտավորեցնել պատասխանողին տրամադրել հայցվող տեղեկությունը:

Ոստի, Վերաքննիչ դատարանի կարծիքով, իրավունքի խախտման փաստի հաստատման պահանջի ընդունումը ենթակա է մերժման ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով, ինչը և իրավացիորեն կատարվել է Վարչական դատարանի կողմից:

Ինչ վերաբերում է բողոքաբերի մատնանշած մեկ այլ վարչական գործով դատարանի արտահայտած իրավական այլ դիրորոշմանը, ապա Վերաքննիչ դատարանը նշում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով՝ իր կողմից պարտադիր կիրառման են ենթակա միայն ՀՀ վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները, այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները:

Տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի կապակցությամբ Վերաքննիչ դատարանն արձանագրում է հետևյալը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է ՀՀ վարչական դատարանին առարկայական ընդդատության ընդհանուր շրջանակը:

Մասնավորապես. «1. Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, ներառյալ՝

1) հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը.

2) վարչական մարմինների միջև այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման վերադասության կարգով.

3) հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող միավորումների, ներառյալ՝ արհեստակցական միությունների գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ վեճերով գործերը:

2. Վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի (այսուհետ՝ սահմանադրական դատարան) ենթակայությանը վերապահված գործերը, ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված գործերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (այսուհետ՝ Սահմանադրություն), միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

2. Վարչական դատարան կարող են դիմել նաև վարչական մարմինները կամ պաշտոնատար անձինք՝

1) ֆիզիկական կամ իրավաբանական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով, եթե օրենքով նախատեսված է, որ վարչական պատասխանատվության կարող է ենթարկել միայն դատարանը.

2) ֆիզիկական կամ իրավաբանական անձանց որոշակի իրավունքներից զրկելու կամ նրանց վրա որոշակի պարտականություններ դնելու պահանջով, եթե օրենքով դա վերապահված է դատարանին.

3) ընդդեմ մեկ այլ վարչական մարմնի՝ իրավասության վերաբերյալ վեճով, եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադասության կարգով:

3. Վարչական դատարան կարող են դիմել նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինները կամ պաշտոնատար անձինք՝ ընդդեմ վարչական մարմնի, եթե համարում են, որ այդ մարմնի

վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել պետության կամ համայնքի այն իրավունքները, որոնց պաշտպանության լիազորությունը դրված է իրենց վրա, եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադասության կարգով:

4. Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարան կարող է դիմել նաև Մարդու իրավունքների պաշտպանը, ինչպես նաև Երևանի ավագանու խմբակցությունը՝ սույն օրենսգրքի 26-րդ գլխին համապատասխան:

Վերոգրյալ նորմերից հետևում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ուժով յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձի իրավունք է վերապահված դիմել ՀՀ վարչական դատարան այն դեպքում, երբ նա համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների (դրանց պաշտոնատար անձանց) վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները (հանրային իրավահարաբերություններից ծագող գործեր):

Վերոգրյալից հետևում է, որ հանրային իրավահարաբերություններից ծագող գործերը բաժանվում են երեք խմբի՝

1. ֆիզիկական կամ իրավաբանական անձինք ընդդեմ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց.

2. վարչական մարմիններն ընդդեմ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց.

3. վարչական մարմիններն ընդդեմ վարչական մարմինների:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲ ընկերությունը վերոշարադրյալ խմբի մեջ չի մտնում և չի հանդիսանում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, ուստի տեղեկատվություն տրամադրելու պահանջը <u>տվյալ ընկերության կողմից</u> դուրս է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված առարկայական ընդդատության շրջանակներից, ուստի՝ ՀՀ վարչական դատարանի կողմից նշված պահանջի ընդունումը մերժելը ևս հիմնավոր է:

Ինչ վերաբերում է բողոքում նշված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորմանը, ապա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ հայցադիմումը չվերահասցեագրելու հանգամանքը հայցադիմումի ընդունումը մերժելու որոշումը վերացնելու հիմք հանդիսանալ չի կարող, քանի որ, ամեն դեպքում, նշված պահանջը չի կարող քննվել Վարչական դատարանում:

Միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով հայցադիմումը վերադարձնելու մասով վիճարկվող որոշումը ենթակա է վերացման: Ընդ որում, Վերաքննիչ դատարանը սույն հարցով եզրահանգումներ կատարելիս անդրադառնում է բացառապես այն հիմքերին, որոնցով ղեկավարվել է Վարչական դատարանը պահանջը վերադարձնելու որոշում կայացնելիս՝ չանդրադառնալով պատասխանողի՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածի սուբյեկտ հանդիսանալու կամ չհանդիսանալու խնդրին:

ՀՀ վարչական դատարանի կողմից վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով հայցադիմումը վերադարձվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով, ըստ որի՝ դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե մեկ հայցադիմումում միացված են մեկ կամ մի քանի պատասխանողին ուղղված՝ միմյանց հետ չկապված պահանջներ:

Տվյալ դեպքում, մյուս երկու պահանջների ընդունումը մերժվել է, ինչն արդեն իսկ նշանակում է, որ առկա է միայն մեկ՝ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջ, որպիսի պարագայում անիմաստ է դառնում այն դիտարկել որպես այլ պահանջների հետ մեկտեղ քննվելիք պահանջ: Հետևաբար, այս իրավիճակում, վերը նշված հիմքով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի վերադարձը Վերաքննիչ դատարանի կողմից դիտվում է անհիմն: Ուստի, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ հայցադիմումը մասով վերադարձնելու մասով ՀՀ վարչական դատարանի 16.01.2014թ. որոշումը ենթակա է վերացման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 140-րդ, 141-րդ, 144-146-րդ, 148-րդ, 153-րդ և 156-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը,

ՈՐՈՇԵՑ

Վերաքննիչ բողոքը բավարարել մասնակի:

Հայցադիմումը մասով վերադարձնելու մասով վերացնել ՀՀ վարչական դատարանի 16.01.2014թ. «Հայցադիմումը մասով վերադարձնելու, մասով հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

Մնացած մասով բողոքը մերժել:

Որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան՝ այն ստանալու պահից հնգօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ